ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 48

ք.Արտաշատ

„26" մարտի 2024թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-ի N 144-2020 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի «Պետական կառավարման համակարգի մարմինների ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված պետական սեփականություն հանդիսացող շենքերն ու շինությունները (տարածքները) պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը հանձնելու մասին» N 346-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի՝ ներառյալ դրանց զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերի հանձնման–ընդունման աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Նախագահ՝ ՀՀ Արարատի մարզպետ Սեդրակ Թևոնյան

անդամներ՝

Արարատի մարզպետի աշխատակազմի՝

ֆինանսական վարչության պետ Լեոնիկ Խաչատրյան

կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Ալբերտ Մկրտչյան

առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ Հայկ Բաղալյան

քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների
կառավարման վարչության հողաշինության բաժնի
գլխավոր մասնագետ Ոսկան Միսակյան

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2020 թվականի օգոստոսի 13-ի N 144-2020 որոշումը ճանաչել ուժը կորցրած:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**